

# ԱՐԱՆԱՄ ԵՐԵՒԱՆՑԻ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԱՑՆ 1721-1736 ԹՈՒԻ»

(Շար. տե'ս «Բազմավեպ», 1975, ք. 1-2, էջ 107-131)

Ձեռագիր Ս. Ղազարի, ք. 2717

Բնագիր Արքեպիսկոպոսի

(ԳԼՈՒԽ Է.)

Վերոյ ասայցեալ պատմութիւնիս, որ գրել եմ եւ թարմանեալ եմ, քանզի պատմութեանս թվականէն, որ սկիսըն գրաց եմ, որ աղվանն առեալ էր ի Ըսպհան, աղվանն լսեց որ օսմանցու հզօրքն նվազացեալ, աղվանն սկսեց Ըսպհանու սահ-

Ձեռագիր Ս. Ղազարի, քիւ 2681

Խմբ. (Հ. Մատթէոս Եւդոկիացիի)

[ԳԼՈՒԽ Է.]

Թէ ո՞րպէս դիմեաց ազուանն երթալ ի վերայ Թաւրիգու եւ եհաս ի Ֆալիան. որչափ չարիս արար Ֆալիանայ եւ յԱյծի բերդն եղելոց. եւ զիարդ պաշարեաց գՀամատան եւ ոչ կարաց առնուլ եւ յետս դարձաւ, եւ կարմեաց գնալ ի վերայ Թաւրիգու:

21ք

Յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի չորրորդի աղուանն, որ զմեծ Շօշ քաղաքն առեալ տիրէր, իբրեւ լուաւ զնուազիլ զօրացն օսմանցւոց, որ եղեւ ի հարուածոյ մահաբեր հիւանդութեան անկելոյ ի զօրսն, որպէս յառաջ քան

1. Այս հատուածը սկսելէ առաջ՝ կը գրէ. Եթէ փոքր փոքր գլուխ ոչ արասցուք, յայսմ վայրի ոչ պիտոյ է խորագիր եւ գլուխ:

մանից հզօրքն դալ Թաւրիգու վերայ: Վերջայորայպէս եկ աղվանն եհաս-Ֆալիան կասեն, մին մեծ գեղ այ, որ գն [= 300] փորքայդոյն գեղ էր, նորա հրամանի տակն են, այսպիսի յայտ լիցի հետեւողաց եւ կարգացողաց որ յիմասցուք զայս գեղերս, որ այսպիսի պատվական եղանակն կասեն Ֆալիան գն [= 300] գեղ ոչ էր նես: Այսպիսի յիմցուք որպէս ասացանք: Նախ եւ առաջ ելաւ կռիւ ի Ֆալիան ի հետ փարսոյ հզօրին հետ: Այս Ֆալիան որ պատմեցի մեր սիրելի տերանց, այս Ֆալիան ոչ օսմանցին է առել ոչ աղվանն. այս յառաջի պատերազմն այ որ աղվանն եկեալ է ի Ֆալիան: Երբ | եհաս աղվանն Ֆալիան, զկսեց կռիւ պարսոյ հզօրին մինչ ի խ [= 40] օրն: Յաղութաց աղվանն՝ հզօրի պարոյ, սուրն քաջեց բօլանդակ. մնացեալն դավառներն կամ գեղերն՝ սկսեցին իրեանց պատրաստութիւնն տեսանել: Այս գն [= 300] գեղոյ մարդոյ կէսն սրով քնցաւ, մնացեալեր եկին մին պղտիկ բերդ կէր, որ է անունն Քէջի-Ղալասի, այստեղ ժողովեցան, ոչ եղան հնազանդ աղվանին: Աղվանն եհաս Քէջի-Ղալէն, սկսեց կռիւ, ոչ կարաց աղվանն յաղդել սորանց: Աղվանի մէջն մին խան կէր աղվանի, որ

զայս կարգեալ գլուխդ պատմեցաք, եւ նա բազում զօրօք դալ ի վերայ Թաւրիգու: Եւ եհաս ի գիւղաքաղաք մի մեծ Ֆալիան անուանեալ, ընդ որով են երեք հարիւր գիւղօրէք: Եւ զօրացն պարսիցն ընդդէմ եկեալ նմա՝ պատերազմեցան ընդ զօրս նորա զաւուրս խ [= 40]: Եւ եհար զնոսա աղուանն սրով սուսերի: Եւ տիրեալ միանգամայն երեք հարիւր [300] գիւղիցն՝ Ֆալիանայ՝ կոտորեաց զերիտասարդս նոցա սրով սուսերի, եւ զամենայն որ միանգամ կարօղ էր զինուորիլ. եւ նուազ արար զարս դաւառացն կիսոյ չափ: Տեսեալ զայս չարիս մնացեալ դաւառացն՝ շուրջանակի վառեցան զինու, կազմեցան պատրաստեցան ելանել ընդդէմ նմա ի պատերազմ. եկին ի միասին եւ մտին | ի բերդ մի փոքրիկ անմարտնչելի, որ ի բարբառս այլ աղութաց անուանեցեալ է Քէջի-Գալէ, այս է՝ այծի բերդ: Լուաւ զայս աղուանն, եկն եւ պաշարեաց զնա: Իսկ տօք ի ներքս էին, յամրութիւն բերդին յուսացեալ՝ ոչ կամէին դալ ի հնազանդութիւն, այլ մարտնչէին:

Տեսեալ զօրագլխին աղուանից, որոյ անունն էր Զըլալ, զի ոչ ինչ հնար գոյր յաղթելոյ նոցա, քանզի չունէին զգնտակաւոր դուրս ձգելոյ ի վերայ բերդին, խորհեցաւ պատրանօք զնոսա ըմբռնել: Եւ առաքեաց զայր մի ի պատգամաւորութիւն հրո-



պհան ինչ որ լավ կտրիջ կէր՝ աղվանն հետ վեր կալավ, որ  
 19ա գնան կռիւ, տեղն դարկաղենուց: Վեր կացան, եկին Համայ-  
 դանայ վերայ որ Համայդան առնեն:

(ԳԼՈՒԽ Ը.)

Ոչ կարացին առնել Համայտան: Ըռայմաղան խանն իւր  
 հզօրօվն դուռ եկավ, Լալին կասեն, մին գեղ այ տեղն, կռիւ  
 արին, Ըռայմաղան խանըն յախովեցավ, եփախ, եկ ի մէջ Հայ-  
 մատու, ոչ ելավ ի դուռս: Աղվանն ոչ կարէր մոտ դալ ի բեր-  
 թին: Մին ամիս աղվանըն նստեց Հայմատանայ մոտ, ոչ կարաց  
 առնել: Յետ դառավ, գնաց վերջայպէս Փալհան, նստեց տեղն,  
 ոչ գնաց Թարվէղու վերայ: Այսպէս որ ասացանք:

Բնակիլ ի Շօշ քաղաքի: Եւ ղընտիր ընտիր պատերազմօղ երի-  
 տասարդս նոցա սպառաղինեաց ընդ իւր երթալ ի վերայ Հա-  
 մատանայ:

[ԳԼՈՒԽ Ը.]

Թէ ո՞րպէս զօրագլուխ օսմանցւոց դիմեաց ի վերայ Համատա-  
 նայ առնուլ, եւ յերթալն պատահեցաւ ի փոքրիկ քաղաքն Սայ-  
 դաւայ, եհար գնա եւ ասպատակեաց, եւ անտի անցեալ գնաց  
 ի վերայ Համատանայ, էառ գնա եւ կռտորեաց զօրաւորս, եւ  
 գրովանդակ քաղաքն ասպատակեալ գերեաց:

23բ

Յորժամ Զըլալ զօրագլուխն աղուանից բազում զօրօք մեր-  
 ձենայր հասանիլ ի Համատան, աղգ եղեւ Ռամաղան փաշային  
 Համատանայ, եւ ել ընդդէմ նորա զօրօք ի դաշտն Լալին ան-  
 ուանեալ՝ պատերազմիլ ընդ նմա: Ի պարտութիւն մատնեցաւ  
 Ռամաղանն եւ փախեաւ եմուտ ի քաղաք անդ, եւ այլ ոչ եւ ար-  
 տաքս: Յառաջ խաղաց աղուանն եւ եկն մարտնչիլ ընդ քաղա-  
 քին, բայց ոչ կարաց մերձիլ ի բերդն, այլ ի բացեալ յաւուրս  
 բազումս նստեալ պաշարեաց զքաղաքն: Իբրեւ ետես զի առանց  
 դօրի եւ հրաղէն գնտակաց ոչ էր հնար առնուլ զնա, զի ոչ ու-

Արդուլայ փաշէն լսեց որ աղվանն յետ դառավ, շուտով գիր  
 ղրկեց սուլթան Ահմատին թէ՝ «Աղվանն եկավ Համայդան, չը  
 կարաց առնել, յետ դառավ գնաց. գնացել այ որ շատայցնէ  
 հզօրն, դայ Հայմատանու վերայ: Երբ Համատան առավ աղ-  
 վանըն, զը դայ Թարվէղ էլ մեր ձեռնէն կանչէ»: Երբ որ սուլ-  
 թան Ահմատն լսեց այս բանս, շուտով դ. [== 4] դռնայպետ ղըր-  
 կեց Հասան փաշին թէ՝ «Բեզ մեծայորեցի, որ գնաս ի վերայ  
 Հայմադանայ»:

19բ

Հասան փաշէն իւր պակասութիւնն տես: Ղրկեց բաջի-  
 լան, որ մին ասի ա, որ բաջիլան կասեն, էն [== 7.000] բաջի-  
 լան քուրդ, բովանդակ երկաթ հազաց, մին այլակերպում՝ որ  
 Աստուած փրկէ, Տէրն ազատէ զսոցանց պատկերիցն, մարդ է  
 հալում ի վախէն: Այսպէս ղրկեց մառջանի արաբ կասեն, ըն  
 [== 8.000] էլ տեղէն եկավ: Արդիւլանդ կասեն, էն էլ մին աղգ  
 այ, 14.000 հզօրք տեղէն եկավ: 9.000 էլ ենկիչարի, 6.000 քնրա-  
 ջի, որ այլոց դիտութիւնովն որ այսպէս կասեն: 4.000 քուրդ  
 ի Ձանկանայ, 1.800 ջահ կասեն, խըլլայ ասկէն այ: Ղարայ-  
 Զօրան կասեն, որ էլ քուրդ այ, 800 էլ տեղէն էկավ: Տարեհայ  
 բէկ կասեն, որ Ձաղովայ, նորա տեղն որ 40.000 տուն ունի, որ

նէր ընդ իւր զայսպիսի գործիս, եթող զնա եւ դարձաւ գնաց  
 ի Փալհան: Զտեղի էառ անդէն եւ ոչ եւս համարձակեցաւ եր-  
 թալ ի վերայ Թաւրիզու:

Իբրեւ լուաւ Արդուլայ փաշայն Թաւրիզու, թէ աղուանն  
 յետս դարձաւ ի Համատանայ, գրեաց առ սուլտանն իւր, թէ  
 «Աղուանն յետս դարձաւ ի Համատանայ յաւելուլ զզօրս եւ դար-  
 ձեալ յարձակիլ ի վերայ նորա եւ յետ այնորիկ դալ ի վերայ  
 Թաւրիզու»: Յայնժամ սուլտանն զչորս սուրհանդակս յղեաց առ  
 24ա Հասան փաշայն հրովարտակօք՝ | ասել նմա, թէ «Կացուցի զբեզ  
 զօրագլուխ զօրացն, որք են ի կողմանդ յայդոսիկ, եւ հրաման  
 ետու զօրաժողով լինիլ եւ երթալ ի վերայ Համատանայ»:

Իբրեւ ի միտ էառ Հասան փաշայն դրանս հրովարտակին,  
 ձեռն էարկ զմեծ բազմութիւն զօրաց կուտել: Է քեղ մի քրդաց  
 բաջիլան անուանեալ, աղգ ժպիրհ, այլադէմ, դազանասիրտ,  
 արիւնարբու, որոց տեսիլ երեսացն՝ զտեսողն պակուցանէ: Ա-  
 դաքեաց քառ աղգս այս եւ էառ ի նոցանէ զեօթն հազար սպա-  
 ռաղէն զրահաւոր: Է եւ աղգ մի մարջանի արաբ անուանեալ, եւ  
 ի սոցանէ էառ զուրթն հազար քաջամարտիկ: Է եւ աղգ մի ար-  
 դիւաւանդ կոչեցեալ, եւ ի սոցանէ էառ զչորեքտասան հազար:

սեւ չատեր այ, 1.600 տեղէն եկաւ, որ եղաւ վերջայպէս 43.400 հզօր, մինչ ի 28 օրն, այսպէս ջամ եղան որ ասացանք եւ յիշեցանք, մանայական մինչ ի դնալն Ձաղօլ, այսչաբօլս հզօր եղան, որ ասացեալ եւ յիշեց եմ ի վերոյ:

43.400 երբ որ դնաց եհաս ի Ձաղօլ, Ձաղօլու բէկն, որ է անուներն անվանի Ահմատ բէկ, որ սա լինի Ձաղօլու բէկն: Վերջայպէս | Հասան փաշէն խնդրեց Ձաղօլու բէկին, հրայման ետ նորա թէ՛ «Բեղնէ 24.000 հզօրք կուղեմ»: Ոչ կարեցաւ պատասխանն տալ: Յայտ լիցի սիրելի մեր տերանց, որ Հասան փաշէն շատ վաղար իշխան է կամ փաշայ, որ բօվանդակ երկիրն ի ձեռն նորա կու սարսեն, ոչ մարդ կարէր նորա պատասխան տալ, թէ մեծ կամ փոքրն՝ բովանդակ ի նորայէ սարսայբար են մանայական: Վերջայպէս դնաց Ահմատ բէկն իւր ասգիցն, ինչ որ սեւ չատերանոց տուն ունէր, ամէն տանից մին մարդ, մին տանից երկու մարդ, մին տանից 3 մարդ, այսպէս ժողովեց 15.000, բօվանդակ ձի զրհեհօք, ամէն ի մէջ երկաթի, եկին ի մօտն Հասան փաշի: Հավանեցաւ, էլ ոչ ուղեց հզօր, քանզի 24.000 էր ուղեւ, մանայական հավանեցաւ, էլ յառայվել չուղեց: Մինչ ի 2 ամիս նստեցին տեղն Ձաղօլ, որ սորայ հզօրն եղաւ 68.400 հզօրք, ելին տեղէն դնալու ի վերայ Համա-

24բ

Արդ զսոսա ի վերայ իւրոց հնգետասան հազարացն յաւելեալ՝ եւ այլ եւս.....<sup>2</sup> եղեն չորս բիւր երեք հազար չորեք հարիւր | պատերազմօղ սպառազէնք: Եւ ինքն Հասան փաշայն էր այր ահարկու, դաժանատեսիլ, անդուլթ, յորմէ ամենայն ոք սարսէր: Եւ յետ աւուրց այսպիսի պատրաստութեան իւրոյ, չուարար ամենայն զօրօքն հանդերձ, խաղաց դնաց եւ եհաս ի դաւառն, որ յայլազգեաց բարբառս Ձաղօլ կոչի: Ընկալաւ դնա Ահմէտ բէկն Ձաղօլու բազում չքով. եւ եղեւ նմա մնալ անդէն ամիսս երկուս: Եւ հրամայեաց Ահմէտ բէկին տալ յիւրոց անտի զօրս իբրեւ երկու հազար չորեք հարիւր: Եւ նա ոչինչ կարաց ապուսել նմա յերկիւղէն, այլ զերկուս արս յիւրաքանչիւր տանէ առեալ՝ հաւաքեաց զերիտասարդս իբրեւ հնգետասան հազար, ամենեքեան զրահաւոր ձիաւորեալ եւ այլ զինու զարդու վառեալք ի պատերազմ. որք յաւելան ի զօրս Հասան փաշային, եւ բովանդակն եղեւ վաթսուն եւ ութ հազար չորեք հարիւր:

2. Չորս տող դատարկ թողուած է, իսկ լուսանցքին վրայ կը ծանուցանէ՝ Թէ օրինակն ամիսամալի է:

դանայ: Ձաղօլու վեր կացին Թաղիգերդուն, որ պարսի լեզվաւ, օսմանցք լեզվաւ՝ Թաղքասարայ, դնացին տեղն, տեղէն դնացին Քասրի խանըն, տեղէն դնացի Գիրենդ, տեղէն դնացի Հառնայվայ, տեղէն դնացի Մայտաշ, տեղէն դնացի Քրմանշայ: Վերջայպէս Քրմանշայ հասաւ, Հասան փաշէն հիվանդացաւ. մին թեթեւացի մահ սոցանց մէջն երեւաց փորքայգոյն, Հասան փաշէն տեղն | հիվանդացաւ, վերջայպէս եօթն օրէն վեր մեռաւ մնաց:

20բ

Օսմանցու հզօրքն մտաց ոչ կարացին դնալ Հայմադանու վերայ: Հասան փաշէն ուն մի որդի, որ էր անուներն Ահմատ փաշայ: Սայ Ահմատ փաշէն խնդրեց օսմանցու հզօրքն, մեծայմեծքն, իշխանքն, իւրեան մէջն խորհուրդ արարին, որ խաբար զրկեն սուլթան Ահմատին: Վերջայպէս մարդ զրկեցին սուլթան Ահմատին: Սուլթան Ահմատն լսեց ի վաղճանիւն Հասան փաշի, երկու դռնայպետ զրկեց սուլթան Ահմատն լաւ սկեստով թէ՛ «Ահմատ փաշիէ մեծայորեցի, որ դնայ ի Համատանու վերայ, իւր կապեալն կապեալ լինի, իւր արձակեալն արձակեալ լինի»: Վերջայպէս Ահմատ փաշէն տեղէն Քրմանշայու վեր կացաւ իւր մեծ հզօրօվն, դնալ ի վերայ՝ Համադանայ: Քրմանշայու ելաւ դնաց Բէսթուն, որ Բէսթուն կասեն մին մեծ խան այ, որ Շիալի

25ա

Ապա ել ի Ձաղօլոյ դնալ ի Համատան, եւ հասեալ ի դաւառ մի Քասրա անուանեալ՝ զտեղի էառ աւուրս ինչ: Անտի դնաց | ի Գիրենդ եւ ի Գիրենդոյ ի Հառնայվայ, ի Հառնաւոյ ի Մայտաշ, եւ ի Մայտաշոյ ի Քրմանշա, եւ անդէն եհար դնա տէր եւ հիւանդացաւ, ուր եւ մեռաւ իսկ յետ եօթն աւուրց:

Եւ զօրն այնուհետեւ ոչ կարաց խաղալ անտի: Եւ էր նորա որդի մի Ահմէտ անուամբ. զսա հրամանատար իւրեանց կացուցանել կամեցան ամենայն զօրքն: Եւ վասն սմին իրի խորհուրդ արարեալ մեծամեծքն՝ հրովարտակս առաքեցին ի Կոստանդնուպօլիս առ սուլտանն՝ ծանուցանել նմա զմահն զօրագլխին իւրեանց: Եւ վաղվաղակի զչորս փառաւոր սուրհանդակս հրովարտակօք առաքեաց առ նոսա ասել, թէ «Ձերդի Հասան փաշային, որ է Ահմէտ փաշայ, կացուցի ի տեղի հօր նորա՝ երթալ ի վերայ Համատանայ»: Եւ ել ի Քրմանշայէ Ահմէտ փաշայն, որդի Հասանին, ամենայն զօրօքն երթալ ի Համատան: Խաղաց դնաց եւ եհաս, բանակեցաւ ի տեղի մի, ուր գոյ մեծ իջեւան մի Բէսթուն կոչեալ՝ ի Շիալի իշխանէ շինեալ: Եւ անտի դնաց ի Սահանա, որ է աննման, զեղեցիկ քաղաք մի: Ան-



պարսից ազկն դուրս եկավ քաղաքն, օսմանցին յետես որ պարսոյ մարդն դալիս այ, վեր կացավ շուտով, յառաջ դնաց օսմանցին, ելավ կռիւն Լալինայ դղումն մէջ, Լալին մէջ, դօրօւն եղավ ասոնց կռիւն: Պարսոյ մարդն այնչափ շատ են, այլոց ասացեալն որ կասեն Համայդեանայ մէջն կայ յո [= 300·000] հզօրք, մեծ կամ փոքն. օսմանցուն կայր այսչափ հզօրս՝ որ ի մէջ պատմութիւնիս դրաց եմ եւ յիշեալ եմ: Վերջայպէս գ [= 3] անգամ պարսոյ մարդն դուս եկավ, ոչ կարաց յախտութիւն տալ, յախտվեցաւ, եփախ, եմուտ Համայդեանայ մէջն:

Օսմանցի դնաց պատեաց չորք կողմն քաղաքի, լարեաց թօբերն ի վերայ քաղաքին. ժե [= 15] թօբ լարեաց ի դուռն Զուլֆան, գ [= 6] թօբն լարեց Մուխտարան, ժա [= 11] թօբ լարեաց ի դուռն Սիլանայ, ք [= 8] թօբ լարեաց ի դուռն Ղայտայրանայ, ժք [= 12] թօբ լարեաց ի դուռն Հէյդարու, ք [= 8] թօբ լարեաց ի դուռն Թուսուրքանու մեջի: ծե [= 55] օրն ոչ կարացաւ առնել | Հայմայտան: ծե [= 55] օրն որ վերջ եղավ, օսմանցին քաղաքին վերայ երիչ արաւ. օրն երկուշաբթի, Աստուած փրկէ Տէրն աղատէ, երբ որ դ [= 4] կողմէն սկսեցին օսմանցին այլալեւարաւ երիչ անելով, երկինք դետինք շարժե-

Եւ զօրքն պարսից, որք ի Համատան էին, ըստ պատմելոյն ոմանց՝ էին իբրեւ երեք հարիւր հազարք: Ի դիմի հարաւ օսմանցին պարսիցն, որք ի Համատանայ յարձակեցան ի վերայ իւր, եւ եհար զնոսա սրով սուսերի եւ հրազինաւ: Երեցս անգամ զօրն պարսից յարձակեցաւ ի քաղաքէ անտի ի վերայ օսմանցուց եւ ոչ կարաց յաղթել նոցա եւ փախուցեալ յետս՝ եմուտ ամրացաւ ի քաղաք անդ:

Եւ օսմանցին յառաջ մատուցեալ զզօրսն<sup>3</sup> պաշարեաց զքաղաքն ի չորից կողմանց: Եւ կառոյց զամենայն դռսն ընդդէմ քաղաքին եւ սկսաւ հրդեհել եւ քակտել զամենայն փայտակերտ շինուածս քաղաքին, եւ զյիսուն եւ չորս աւուրս պատերազմեալ՝ ոչ կարաց առնուլ զքաղաքն: Եւ եղեւ | ի յիսուն եւ հինգերորդում աւուր, որ օրն էր երկուշաբթի, օսմանցին ի չորից կողմանց քաղաքին յառաջ մղեաց զզօրսն՝ միւիլ ի քաղաք անդ եւ մայլ ո՛չ մնալ արտաքս: Եւ ահա այն ամենայն բազմութիւն անթիւ զօրացն աղաղակաւ մեծաւ յառաջ միեցեալ՝ զերկեր թընդացուցին եւ հասին ի տակ պարսպին, զի ի ներքս միեցցին:

3. Զեռագիրն ունէր՝ զօրսն:

ցաւ: Երբ օսմանցին դնաց եհաս բերդի տակն, որ մտանէ ի մէջն բերթի, պաշտոյ մարդն ի մէջ բերթոյ՝ անպիսի կրակ կամ թէ սուր թարեցուց ի դուրսոյ օսմանցոյ, Աստուած փրկէ Տէրն աղատէ, որ օսմանցին այնպէս թարեցաւ, ինչ որ երնայցէն անձրեւ լինի հեղում, մարդ մարդոյ վերայ է դասվեալ: Վերջապէս օսմանցին յետ դառցաւ, դնացին իւրեանց եօթեանն: Ահա մատ փաշէն իւր հզօրին ականեց հայեցաւ, որ իւր հզօրիցն ժքն [= 12·000] հզօրք էր անցեալ սրով կամ թվանքով. այսպէս յիմացուք սիրելի մեր տերանց որ յիշացանք: Յետ այնորիք վերջայպէս Ահմատ փաշէն հրայման ետ թօբայպետին հանայապաղ կ [= 60] թօբն կրակելով ի վերայ քաղաքին իե [= 25] օր, ոչ կարաց առնել քաղաքն:

Մին արդրումցի Բաբուշի Ղարայ Բիբար կասեն, լավ պատվական լաղում գիտէր, որ լավ լաղումէի էր, մանայլանդ փաշէն ունէր | լաղումէի ոչ: Էր այնպիսի վարպետ. եկ ի մօտ փաշին, ասաց. «Փաշէն ողջ լինի, ես լաղումով կառնեմ քաղաքն»: Փաշէն հավանեց ասոր ասաց բանի. փաշէն յետ ասոր ի [= 20] հատ բանուր յաշակերտ, իւրեանց հացն, իւրեանց ուտելիքն, ամենայն կերակուրն սոցան: Ըսկսեցին լաղումին շինել. մտան ի տակն, կէս ժամէն տեղ շինեցին, որ տարան բերդի մէջն մը-

Եւ խոնեցան առ յատակաւ պարսպին մարդ ի վերայ մարդոյ, եւ որք ի բերդին էին զօրք, զամենայն հրազէնս իւրեանց միանդամայն հեղեալ ի վերայ նոցա՝ տապաստ արկին զայնչափ բազմութիւն նոցա միանգամայն վաղվաղակի, իբրեւ զտերեւս ծառոց ի սաստիկ խիստ կարկոտոց: Եւ տկարացան նոքա աղարտել զպարսպն եւ կամ ի վեր ելանել: Եւ դարձան յետս եւ հեռացան ի պարսպէ անտի, եւ դնացին ի բանակս իւրեանց: Եւ հանդէս արար փաշայն զօրաց իւրոց եւ ետեւ, զի երկուտասան հազարք ի նոցանէ անկեալ էին յայնմ արշաւանի: Հրաման ետ | զզօրսն անդադար արձակել եւ զաւուրս իե [= 25] զկ [= 60] դռս արձակէին եւ այնու եւս ոչ կարացին զքաղաքն առնուլ: Ապա խորհեցաւ փաշայն ական հատանել առ պարսպն եւ զբարութ լցեալ անդ՝ զգետինն եւ զպարսպն միանգամայն պատառել:

Եւ էր ի զօրուն ի հայոց ազգէ ոմն կարուակ Ղարա-Բիբար անուամբ, կարնեցի, որ քան զայլ ականահատսն առաւել հմուտ էր զործոյն եւ ճարտար: Մատեաւ սա առ փաշայն եւ խօսեցաւ ընդ նմա վասն իրիս այսորիկ: Եւ հրաման ետ նմա փաշայն՝ յառաջադէմ եւ զլուխ լինիլ ականահատացն: Եւ ի մե-

տան, գետնի տակն քանդելով մինչ ի մէջն բերդի: Մինչ ի ժո-  
[= 14] օրն թամամեցին, պռծան: Վերջայպէս եկ հաս ի ժա-  
մանակս ձը [= 88] օր. ձը [= 88] օրէն յետոյ ըսկսեցին կռիւն  
բազում. օրն ուրբաթ: Օսմանցին ըսկսեց քաղաքին վերայ երիշ  
անայ: Երբ որ ենկիչարի ըսկսեց քաղաքի վերայ երիշ, լաղումն  
կրակեցին: Աստուած փրկէ Տէրն աղատէ, երբ կրակեցին լա-  
ղումն՝ առավ բերդի կէսն ելավ երկինք: Որդի հօրն ուրացավ,  
հայր որդուն. օսմանցին մտավ ի մէջ բերդին, ըսկսեց սուրն-  
քաշել: Որ սայ լաղումն Զուհանայ դռնիցն կրակեցին՝ օսման-

տասան աւուրս արարին եւ վճարեցին զականն. լցին ի ներքս  
զբարութ եւ պատրաստեցին, որ ինչ պիտոյ էր ի նոյն: Եւ եղեւ  
յաւուրն ուրբաթու, յետ ամենայն պատրաստութեանց՝ սաստ-  
կացուցին զպատերազմն եւ յանկարծակի հուր լուցեալ ի բա-  
րութն՝ հրդեհեցին: Եւ պատառեցաւ ականն եւ միանգամայն  
պարիսպն, եւ կէս բերդին եւ յերկինս: Եւ վաղվաղակի յառաջ  
փութացեալ զօրացն օսմանցուց՝ ի բերդն զեղան եւ զաղանա-  
28ա բար յարձակեալք՝ կոտորեցին սրով | սուսերի զամենայն ընդ  
առաջ ելեալսն: Եւ փախեաւ իշխան քաղաքին յանձանօթս եւ  
զերծաւ: Իսկ գունդք զօրաց բերդին եւ մեծամեծք նոցա, որք  
էին Ալի-Շահբաս, Ալի-Քրբիթ, Ալի-Հասան բէկն, ի նախանձ  
բարկութեան բրդեալք ի տեղիս տեղիս պնտեցան ի կռիւ, մարտ  
եղին ընդդէմ զօրացն օսմանցուց: Եւ իբրեւ անյոյս ի կենաց՝  
խստազոյնս պատերազմեցան զաւուրս եօթն յետ պատառելոյ  
պարսպին, այլ ոչ կարացին զբերդն եւ զանձինս իւրեանց ա-  
պրեցուցանել:

Կոտորեցին զնոսա օսմանցիքն եւ առին յաւար զստացուածս  
քաղաքին, զոսկի եւ զարծաթ անհամար բազում: Մանաւանդ զի  
ի քաղաքին յայնմիկ յաճախութիւն վաճառականաց լինէր: Եւ  
զընչաւէտ վաճառականս, զկովապաշտ մլթանիս բազմաթիւս  
զտեալ ի պանդոկս՝ կոտորեցին եւ զանհամար դրամս նոցա,  
զորս ի յարկեղ, զորս ի պահանորդս եւ զորս ի ներքոյ սփռո-  
ցաց դտեալ՝ առին եւ լցեալ եղեն: Եւ այնչափ էր յաճախու-  
թիւն դրամոց ի պանդոկս, մինչեւ աստ եւ անդ սփռեալ կային  
28բ եւ ժողովելով ոչ սպառէին: | Եւ եղեւ իբրեւ կոտորեցին զա-  
մենայն ընդդիմամարտսն, բուռն հարին զանգէնսն զերի վարել.  
եւ զերեցին զանհամար անձինս, զկանայս եւ զերիտասարդս,  
եւ զպատանիս եւ զօրիորդս. իսկ զծերս եւ զմատաղ մանկունս, ի-  
բրեւ ծանրացուցիչս անձանց իւրեանց՝ կոտորեցին: Հասին զե-

ցին սուրն քաշելով զնաց, օսմանցին մինչ ի եհաս քրիստոնի  
եկեղեցոյ դռքն: Այս ողորմելի քրիստոնէքս ի մէջ եկեղեցոյ  
բովանդակ, որն սուրն քաշեցին, որն զերի վարեցին...:

23բ | Մանայվանդ օսմանցու հօրքի մէջն գ. [= 6] հայմանդան-  
ցի մեծ իշխանք կէր, որ Ահմատ փաշին հօր էր եկել, եւ իւր  
հօր մէջումն են: Որ մէկի անուն էր մահտեսի Թարութին, մէ-  
կին անուն էր Պրն. Մաթէոս, մէկի անուն էր Մանի Մանասէ  
անվանի, մէկի անուն էր Մասէհ, մէկի անունն Վարդան, մէկի  
անունըն Մուռ, որ ճամարիդ Պետրոս: Այս իշխանքս Ահմատ փա-  
շին մոտ զնացին թէ՛ «Մենք քրիստոնեայ ենք, խարջ կտանք  
քեզ, մեր զերիքն հրայմայէ որ մեզ յետ տան, մանայվանդ դեռ  
քաղաքի մէջն կռիվ այ, քաղաքի մին կողմն առնել այ օսման-  
ցին, մին կողմն չէ կարում առնել, դեռ կռիվ ի մէջ քաղաքի»:  
Վերջայպէս Ահմատ փաշէն հրայման ետ, զերիքն յետ տվին,  
կէս այ կէս որն տվին, որն տարան: Այսպիսի օսմանցին որ է  
ի մէջ քաղաքին, կռիվ զնաց եհաս Մուխտարանայ Մահլաթ  
կասեն: Է [= 7] օր տեղն կռիվ ելավ, Ալի Շիբաբազ, Ալի Քրբիթ,  
Ալի Հասան բէք, այսոնք որ յիշեցայ, սորանք քաղաքի մեծ քա-  
ղաքապետն են, կռիվ արին: Էս քաղաքիս մէջն որ էր մին խան,  
24ա անունըն Ըռայմազան խան կասեն, այս փախալ, քաղաքի մարդն  
մնաց անտէր: Սոքանք այսչափ կռիվ արին օսմանցուն հետ.  
Է [= 7] օրէն յետոյ Մուխտարանայ թաղն առան, մնաց Հէյ-

րիչքն յեկեղեցին եւ զտեալ անդ զբազումս ի հայոց ազգէ ա-  
պաստանեալս՝ զերի առին զնոսա ընդ որս հաճեցան, եւ կո-  
տորեցին յորս ոչ անխայեցին ապրեցուցանել: Եւ լցաւ ամենայն  
բանակն նոցա աւարաւ եւ զերեօք: Իբրեւ վախճան եղեւ այս-  
չափ եւ այլ բազում չարեաց նոցա, հրաման ետ փաշայն զդիա-  
կունս կոտորելոցն ի քաղաքէ անտի ի բաց հանել, զի քաղաքն  
մի՛ նեխեսցի: Եւ հանին զնոսա ի քաղաքէն եւ լցին ի բացի:

Եւ էին ի զօրուն օսմանցուց համատանցի վեց մեծամեծ վա-  
ճառականք, որք ընդ փաշային յերկրէն օսմանցուց եկեալ էին  
եւ էին արք անուանիք. անուն միոյն մահտեսի Թարութին,  
29ա երկրորդին՝ Մատթէոս, | երրորդին՝ Մանասէ, չորրորդին՝  
Մասէհ, հինգերորդին՝ Վարդան, վեցերորդին՝ Պետրոս: Սոքա  
մտին առ փաշայն եւ աղերս արկեալ առաջի նորա, խնդրեցին  
զգերիսն զայնոսիկ, որք ի Հայոց ազգէ են, ազատ արձակել,  
ասելով, թէ «Մեք ի վաղ ժամանակաց հետէ բովանդակ ազգաւ  
մերով ծառայք եմք հարկատու, ուր եւ իցեմք յիշխանութեան

դարի թաղն, Մաթուլայ թաղն: զ [= 6] օր էլ ասոնք կռիւլ ա-  
րին. վերջապէս բօլանդակ օսմանցին առաւ քաղաքն. անչաբ  
զերի արին որ ոչ ունի համբար, անքնընելի, անհասար, որպէ  
զերի վարեցին: Ահմատ փաշէն եկ ի մէջն քաղաքի, հրայման  
ետ թէ՛ «էդ ըսպանաց մարդիքըն քաղաքիցն դուս քաշեցէք, որ  
քաղաքի մէջն հոտ չընի», որ այչաբ մարդ սրօլ անսաւ խանե-  
րումըն մօլթանիին ըսպանել որ անթիւ, որ հայոց բառ՝ կօլայ-  
պաշտ, օսմանցու լեզւով՝ գուրի, պարսի լեզոյ՝ մօլթանի. այս  
որ ասացանք որ շատ կօտորւել էր. ոսկին կամ արծաթն փողն՝  
խալէջոնց տակ են մնացեալ, յարունի հետ խառնեալ փողն կամ  
դրամն, ոսկեղէն կամ արծաթեղէն, մնացեալ էր այսպէս անտէր,  
որ այնչաբ դրամ վեր առաւ օսմանցի՝ որ արծաթ դրամն տես-  
նէր վեր ձղաց, ոչ վեր առնէ, որ այնչաբ գանձի տէր եղաւ  
օսմանցին:

ձերում: Եւ դուք էք տիրողք եւ խնամարկուք ազգին մերոյ. եւ  
արդ ձեր եմք մեք եւ ընդ տէրութեամբ եւ խնամօք ձերովք կե-  
ցեալ ծառայք եմք եւ պարծիմք ի տէրութիւն ձեր: Եւ արդ  
յայսպիսի աւուրս մեծի յաղթութեան քոյ, ընդ որ յոյժ ուրա-  
խանամք, շնորհեսցես մեզ զնոսա, որք յազգէ մերմէ են, վասն  
կենաց քոց, զի ամենայնիւ ուրախ լիցուք ի մեծի ցնծութեան  
աւուրս այսորիկ: Ընկալաւ զաղաչանս նոցա փաշայն եւ հրա-  
մայեաց ի բաց արձակել զամենայն հայ դերիսն. եւ եղեւ նոցա  
ուրախութիւն մեծ: Բայց ոչ ամենեցուն եղեւ ազատիւ, զի ո-  
մանք թողին ազատ, եւ ոմանք՝ ոչ: Արդ, Ահմէտ փաշայն ամ  
մի նստաւ ի Համատան եւ յետ այնորիկ առաքեցաւ ի Բաղտատ:

(Շար. 3)

Հրտ. Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

## ՔԵՍՈՒՆԻ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ

(Շար. տե՛ս «Բազմավէպ» 1975, ք. 1-2, էջ 132-159)

### «ԿԱՐՄԻՐ» ԵՒ «ՇՈՒՂՐ» ՎԵՐԱԿՈՉՈՒՄՆԵՐԸ

Տեսնելէ յետոյ Կարմիր Վանքին տեղադրականը, անցնինք այժմ  
քննելու կարեւոր ուրիշ երկու հարցեր:

Կարմիր Վանքին տեղադրութեան հետ, սերտօրէն կ'առնչուին  
նաեւ Քեսուռի այս վանքին կցուած ԿԱՐՄԻՐ եւ ՇՈՒՂՐ անուանա-  
կոչումները: Ի՞նչ պատճառներով արդեօք վանքը կրած է նաեւ այս  
զոյգ կոչումները:

Տէր Ղազարեան, մեզի անծանօթ պատճառներով, կը լռէ այս  
մասին: Նոյն լուրքեան մէջ են նաեւ այն հեղինակները, որոնք որեւէ  
պատճառով Կարմիր Վանքին չուրջ անդրադառնալու առիթն ունե-  
ցած են: Հ. Ալիշանն է, որ ենթադրաբար կը փորձէ Կարմիր Վանքը  
միացնել կամ զետեղել Կարմիր կոչուած լեռան մը կողմերը: Սակայն  
վերջնական եզրակացութեան մը չի յանդիւր, եւ Կարմիր լեռան ակ-  
նարկելով կ'աւելցնէ՝ թէ «Պնդրելի են եւ աստ վանք ի նոյն անուն  
լերինն»<sup>64</sup>: Ուրեմն, ինչպէս կ'երեւի, Հ. Ալիշան Կարմիր Վանքը  
աշխարհադրականօրէն կ'որոնէ Կարմիր լեռան շրջանակին մէջ:

Գարեգին Սրուանձտեանց գտած է յիշատակարան մը, 1223 թը-  
ւականէն, որուն պարունակութիւնը կը խորհինք թէ որոշ կապակե-  
ցութիւն մը կրնայ ունենալ Հ. Ալիշանի արդարացի ենթադրութեան  
հետ: Յիշատակարանը կ'ըսէ. «Գրեալ է ի լեառն Կարմիր. ի մենաս-  
տանն ուխտիս որ է անուն Աստուածամաւր. ի կաթողիկոսութեան  
Տեառն Կոստանդիայ, եւ ի ժամանակս մեծի արքային Փիլիպպոսի,

64. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուան, նոյն, էջ 164: